Էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտը

(Հիմնադրման 90-ամյակի առթիվ)

նի ժողովրդական կուլտուրայի ուսումնասիրության գործը և միաժամանակ մասսաների սեփականություն դարձնել հնության այն բոլոր հիշատակարանները, որոնք գիտական ու գեղարվեստական նշանակություն ունեն և կարող են աղբյուր դառնալ կուլտուրական նոր արժեքների ստեղծագործության»: Այս դեկրետով հիմնադրված էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտը Հայաստանի անդրանիկ գիտահետազոտական ինստիտուտն էր, որի իրավասությանն են հանձնվում մատենադարան-ձեռագրատունը, թանգարանը, տպարանը, վանական հանրակացարանը, Հռիփսիմեի վանքը, Զվարթնոց եկեղեցու ավերակները՝ հարակից շինություններով, և այլն:

Դեռևս 1921 թ. փետրվարի 2-ին ինստիտուտի առաջին կազմակերպչական նիստում հաստատվում է գիտական կոլեգիայի հետևյալ կազմը՝ Լևոն Սարգսյան (նախագահ), Երվանդ Տեր-Միհայան (գիտական քարտուղար), Սենեքերիմ Տեր-Հակոբյան (մատենադարանի վարիչ) և Լևոն Լիսիցյան (թանգարանի վարիչ, մինչև փետրվարի 1-ը նա էջմիածնի կուլտուր-կրթական հաստատությունների կոմիսարն էր): Լ. Սարգսյանը նշանակվում է նաև ինստիտուտի կոմիսար և ժամանակավոր վարիչ: Ինստիտուտի գիտական կոլեգիային հանձնարարվում է մշակել կանոնադրության նախագիծ: Հրավիրվում են նոր աշխատակիցներ՝ Արշակ Բարխուդարյանը, Թադևոս Ավդալբեգյանը և Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը: Սակայն դաշնակների փետրվարյան խռովությունը ժամանակավորապես ընդհատում է ինստիտուտի գործունեությունը: Քաղաքացիական կռիվների անմեղ զոհ է դառնում ինստիտուտի հիմնադիրներից մեկը՝ Մյունխենի, Մոսկվայի և Վիեննայի համալսարաններում բարձրագույն կրթություն ստացած երիտասարդ տաղանդավոր գիտնական Լևոն Լիսիցյանը:

Կուլտուր-պատմական ինստիտուտի աշխատանքները վերսկսվում են 1921 թ. ապրիլի սկզբին: Մայիսի 1-ից ինստիտուտի կոմիսար և գիտական կոլեգիայի նախագահ է նշանակվում Կարապետ Մելիք-Օհանջանյանը, կոլեգիայի անդամներ՝ Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը (թանգարանի վարիչ) և Խաչիկ Սամվելյանը (տպարանի վարիչ): 1922 թ. հունվարի 6-ից ինստիտուտի փոխնախագահ է հաստատվել Սենեքերիմ Տեր-Հակոբյանը: Գիտական կոլեգիայի նոր կազմը իր առաջին նիստում, որը տեղի ունեցավ 1921 թ. մայիսի 25-ին, որոշեց մատենադարանի արխիվային բաժինը կարգավորելու և ցուցակագրելու համար հրավիրել Գյուտ ծայրագույն վարդապետ Տեր-Ղազարյանին:

1921 թ. մայիսի 26-ին լուսավորության ժողկոմ Աշոտ Հովհաննիսյանը, էջմիածին ժամանելով, հրավիրում է հատուկ ժողով և առաջարկում վերակառուցել ինստիտուտն այնպես, որ վերջինս իր հետազոտությունների ոլորտն ընդգրկի Հայաստանի ուսումնասիրությանը նաև աշխարհագրական, երկրաբանական, օդերևութաբանական, հողային ջրաբաշխական, տնտեսական գոտիների և այլն տեսանկյունից, բացի կուլտուր-պատմական բաժնից ունենա բնագիտական բաժին ևս: Նույն օրը որոշվում է էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտը վերանվանել էջմիածնի գիտական ինստիտուտ: Լուսժողկոմը հայտնում է, որ ինստիտուտի անձնակազմը ուժեղացնելու նպատակով հնագիտական, ազգագրական և գեղարվեստի պատմության, բ. Լեզվագիտական և ցեղաբանական, գ. Բանասիրական, դ. Պատմական-հասարակագիտական:

Կուլտուր-պատմական ինստիտուտի գոյության առաջին իսկ տարվանից զգալի աշխատանք կատարվեց մատենադարանի ու ձեռագրատան պահպանության, կարգավորման և զարգացման ուղղությամբ: 1922 թ. հունիսի տվյալներով, ձեռագրատունը Թավրիզից ուղարկած 83 և մատենադարանի կողմից ձեռք բերված ձեռագրերի հետ միասին ուներ 1730 հայերեն, ինչպես նաև արևելյան լեզուներով 57 ձեռագրեր, 410 պատառիկներ ու պահպանակներ և անտիպ գրական աշխատանքների մեկ ժողովածու: Տպագրերի բաժնում, որը կազմված էր նախկին վանական և Գևորգյան հոգևոր ճեմարանի մատենադարանների միացումից, կար տարբեր լեզուներով 28 765 հատոր գրականություն՝ բացի պարբերականներից: Նշված ժամանակաշրջանում նշանակալից և արդյունավետ գործունեություն էր ծավալել ինստիտուտի տպարանը, որտեղ տպագրվել են տասնյակ լրագրեր, դասագրքեր, ծրագրեր, ժողովածուներ, օրացույց, ՀԽՍՀ առաջին սահմանադրությունը, մի շարք աշխատություններ և այլն: «Բնագիրներ և հետազոտութիւններ» շարքից ընդամենը մեկ տարում հրատարակվել են հետևյալ գրքերը՝ Ա. «Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ՝ աշխատասիրությամբ Գալուստ Տեր-Մկրտչյանի և Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանի, 1921 թ., Բ. Աշոտ Հովհաննիսյանի «Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը»: Պատմական-քննադատական ուսումնասիրութիւն», 1921, Գ. Աբրահամու Խոստովանողի Վկայք Արևելից, թարգմանութիւնք յասորականէն»՝ աշխատասիրությամբ Գալուստ Տեր-Մկրտչյանի, 1921, Դ. Դավիթ Անանունի «Ռուսահայերի հասարակական զարգացումը (1870 -1900), հատոր երկրորդ, 1922»:

1922 թ. ամռանը գիտական քարտուղար Երվանդ Տեր-Միհայանի խմբագրությամբ լույս տեսավ «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի, գիրք Ա. և Բ., 1921-1922» հանդեսը, որի «Երկու խոսք» առաջաբանում նշված է. «Գիտական ինստիտուտի Բանբերը» իր առաջնակարգ նպատակն է համարում միջոց ընձեռել գիտական ուսումնասիրութեան ենթարկելու Հայաստանի աշխարհագրութիւնն ու ազգագրութիւնը, տնտեսական կացութիւնն ու յարաբերութիւնները, պատմութիւնն ու գրականութիւնը, հնագիտութիւնն ու արվեստը և այլն: Եւ այս հայրենաշէն գործի շուրջը համախմբուելու կոչ է անում լաւագոյն ապագայի ակնկալութեամբ՝ Հայ գիտութեան բոլոր մշակներին»:

Էջմիածնի ինստիտուտը կապեր էր հաստատել միութենական հանրապետությունների և արտասահմանի մի շարք գիտական հիմնարկների հետ: Մասնավորապես, գիտական հրատարակությունների փոխանակում էր կատարվում ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի հետ:

1925 թ. հունվարին Հայաստանի գիտական ինստիտուտի հիման վրա ստեղծվեց ակադեմիական կառուցվածք ունեցող և այդպիսի սկզբունքով գործող բարձրագույն գիտահետազոտական հիմնարկ՝ ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտ:

Ստեփան ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու